Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964
F +374 10 260 961
www.gta.am

# Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ռենեսա» ՓԲԸ-ի 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Ռենեսա» ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «Ռենեսա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Հայաստանի Հանրապետության ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Կազմակերպության ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

ԱՈՒԴԻՏԻ ՂԵԿԱՎԱՐ

/ Հ. Բակլաչյան/

ՏՆՕՐԵՆ

/Ա. Փինարբաշի/

Երևան, 13 մարտի 2008

00040569 "ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ ԷՄԻՕ" "GRANT THORNTON AMYOT"